



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻՆՔԻ - ՄԱՐՏ 1936



12^{me} Année - Mars 1936



Ֆրանսայի Աւետ. եկեղեցին կը հաւատայ

Խմբագրական

Քիչ մը Մարտէսէն

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Եւ քրիստոնէս'յ մըն եմ

Միայն Յիսուս

Քանի մը տպաւորութիւններ

Աստուածաշունչը

Հեւոն Սիմոնեան
Սամուէլ Պ.

Շնորհաց ծովէն

Դնա... ու պատմէ

Լուսիկ Մեղքոնեան

Կենաց ածուներէն

Աստուածաշունչի մը պատմութիւնը

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Մանկաց սիւնակ

Վկայութիւն մը

Հետեւէ Ինծի

Սուրբիկ Ղազարոսեան



ԲԱՆԲԵՐ ԴՈՔԵՐՈՐ ամսաթերթը թէեւ փրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու սրահածնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնաւ ճշմարտութեան
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ ԴՈՔԵՐՈՐ ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս սրահան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխան
նստու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebâtel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ տրամաւիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանի իկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ Եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք Եւ Արտասահման 25 Ֆրանք


Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ անուէով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Ֆրանսայի գրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արեւիկի՛ր դռն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն
ընէ, ու Քրիստոս
քեզի ըյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանկու, խոտամանքէն որ մեզի մնացեր է,
ծնգմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանզի ալ առ
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1956

ԹԻԻ 3

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐ. ՀԱՒԱՏԱՑ

2. (2) — ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ա. Ստացուած Անոր արիւնովը, հետեւաբար կազմուած միայն Քրիստոսի արեամբը
փրկուած հաւատացեալներէ, որոնք նաեւ կը կազմեն Քրիստոսի մայմինը, առանց
ցեղի, սեռի եւ տարիքի խտրութեան:

բ. Փառաւորեալ Փրկչին զխաւորութեան տակ Քրիստոսի մարմինին այլազանութեան
մէջ ունեցած տիեզերական եւ յաւիտենական միութեան: Եկեղեցիին շնորհուած Ս. Հոգւոյն
զանազան պարզեցումներուն եւ անոր՝ Աւետարանը աշխարհի քարոզելու պարտաւորութեան:
Մկրտութեան եւ հաղորդութեան «խորհուրդ-վկայութիւն»ներուն Պաշտօնէից եւ հիւանդ-
ներու ձեռնադրութեան:

է.— ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՈՒ

ա. Աստուածային նախասահմանութեան եւ մարդկային ազատ կամ քի իրողութիւն-
ներուն, որոնք բացորոշ կ'երեւին Ս. Գրքին մէջ իբր զոյգ մը սիւներ, որոնց կատարին վը-
րայ կը հիմնուի փրկութեան կամարը: Սակայն այս կամարը ծածկուած է, քանզի անոնց
վերջնական լուծումը եւ համաձայնութիւնը յայտնուած չէ եկեղեցիին:

բ. Երկրի վրայ ապրող սուրբերուն կեանքին ու նկարագրին անկատարութեան, թէեւ
անոնք «զօրութենէ զօրութիւն» կը քալին: Անոնց սպառնացող ներքին եւ արտաքին վը-
տանգներուն: Այն իրողութեան որ հաւատացեալին Աստուծոյ առջեւ ունեցած «դիրքն» ու
«վիճակը» կը տարբերին իրարմէ:

Առ այս, խաչին մշտական դերին կարեւորութեան, յաղթական կեանքը, ապրելու
համար:

գ. Կը խոստովանինք թէ մարդկային վարդապետական բանաձեւերը միշտ անկատար
են, եւ թէ «շատէն քիչը» միայն գիտենք: Կը վկայենք սակայն թէ էական կը համարինք
բոլոր սրտով «բարի պատերազմը պատերազմելու» եւ «պահելու» այն հաւատքը որ
անգամ մը սուրբերուն աւանդուեցաւ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔԻՉ ՄԸ ՄԱՐՍԷՅԼԷՆ

000

Անոնք պատմեցին ինչ որ Աստուած քրիս էր ի-
րենց հետ:

Ֆորժ. ԺԴ. 26

«Բանբեր»ի ընտանիքին հեռաւոր անդամներէն շատեր, որոնք մեզի հետ տարիներէ ի վեր յարաժամ թղթակցութեան մէջ են եւ աղօթ-
քով զմեզ կը կրեն եւ մեզմէ կը կրուին, ուստի
կը հետաքրքրուին նաեւ տեղւոյս գործով, այն-
պէս, որպէս թէ իրենց տեղին մէջ ըլլար, յաճախ
մեզի հարցուցած են թէ ինչպէ՞ս կը քալէ հո-
գեւոր զորքը հոս: Այս պատճառաւ ներքին ա-
զատութիւնն ու առաջնորդութիւնը զգացիք ձե-
զի սիրելիներուդ, որ այս տողերը կը կար-
դաք եւ ամէն օր կ'աղօթէք «Բանբեր»ի ու ա-
նոր խմբագրութեան համար, «պզտիկ տեղեկու-
թիւն մը տալ խմբագրական սիւնակներու տակ
որպէսզի ձեր հարցերուն պատասխանն ընդու-
նիք ինչպէս նաեւ ձեր աղօթքներուն համար ո-
րոշ նիւթեր ունենաք մեզի համար Տէրոջը առ-
ջէն կայնելու պահուն:

Ձեր մեծամասնութիւնը որ Արեւմուտք կը
գտնուիք, ստիպողաբար Մարսէյլէն անցած էք:
Մարսէյլ, տոգոյն ու մութ յիշատակներ թողու-
ցած է Ձեր սրտին մէջ այն ատենէն ի վեր,
քանզի իրաւացիօրէն քաղաքիս մէջ աղէկ բան
մը չկայ: Աչքերնիդ ուր դարձուցիք, միայն մեզը
տեսաք եւ իրաւունքով ալ թերեւս ըսիք «Ասի-
կա Սատանայի աթոռին եղած տեղն է»:

Բայց ոմանք ալ որ վերջին տասներկու տա-
րիներու ընթացքին այս քաղաքէն անցաք, Ձեր
սրտին մէջ նոյնպիսի խորհորդներու հակառակ
ուրախութեամբ տեսաք թէ հոս կայ Աստուծոյ
զաւակներու խումբ մը, որ կանոնաւորապէս կը
հաւաքուի Անոր խօսքին շուրջ եւ կը սիրէ Յի-
սուսը ու Անոր ծառայելը: Դուք որ քիչ մը եր-
կար մնացիք հոս, մեզի հետ յաճախ պատահու-
թիւն ունեցաք Տէրոջը սեղանէն ճաշակելու ու
կշտանալու եւ ուրախ էիք որ Տէրը Ձեր ճամբուն
վրայ ովասիս մը պատրաստած էր այնպիսի տե-
ղի մը մէջ, զոր հոգեւոր անապատ պիտի կոչէիք
կանխաւ: Ի՞նչ քաղցր է մեզի այն խորհուրդը,
որ դուք Պէյրութէն կամ Հալէպէն եւ ուրիշ տե-
ղէ մը հասած ըլլալով հոս շաքարթամիջին, դեռ

Ձեր գլուխը չհանգչած ծովու հիւանդութենէն,
փնտեցիք եւ գտաք զմեզ եւ մեր եկեղեցին. ա-
ղօթեցիք եւ երգեցիք մեզի հետ եւ միաբերան ու
միաբան զԱստուած փառաւորեցիք: Ձեմ կրնար
մոռնալ մեր կիրակի ժամը 5ի աղօթաժողովին
մէջ այն քրոջ ուրախ եւ թարփ վկայութիւնը
որ կը սկսէր հետեւեալ բառերով, «Այսօր ժա-
մը 2ին Մարսէյլ հասայ եւ հիմա Ձեր մէջ կը
գտնուիմ»:

Այս գործը դեռ կը շարունակուի Անոր շնորհ-
քովը, ու մենք ուրախ ենք տեսնելով թէ Տէրը
այս գործը հաստատած է, հակառակ անոր որ տկար
եւ անկատար ձեռքերով միայն կատարուած է:

Այս տարուան Յունուարի թիւին «Ընթերցող
ներու սիւնակ»ին մէջ քանի մը տող արձանագ-
րեցինք Մարսէյլի եւ իր նահանգին մէջ գտնու-
ած պզտիկ քաղաքներու մէջի հայ գործազուրկ-
ներու նիւթական պարագաներու մասին:

Եթէ ամբողջ Ֆրանսայի մէջ կան 75000 հա-
յուլթիւն մը, իրենց Ֆրանսայի մէջ ծնած զաւակ-
ներուն հետ մէկտեղ, միայն այս նահանգին մէջ
անոնց թիւը 31000էն աւելի է: Անոնց մէջ կան
2300է աւելի գործազուրկներ, որոնցմէ ոմանք
1934 Նոյեմբերէն սկսեալ ռեւէ դրամական օգնու-
թիւն չեն ստանար կառավարութենէն կամ քա-
ղաքապետարանէն, ինչպէս անկէ առաջ կ'ըն-
դունէին, ինչպէս կ'ընդունին ուրիշ նահանգներու
մէջ գտնուող հայեր: Գիտէք նաեւ թէ «Բան-
բեր»ի ընտանիքի անդամներէն ոմանք ալ այս
գժուարութեանց ենթարկուած են եւ խնդրած է-
ինք որ անոնց համար աղօթք ըլլայ:

Այս նիւթական պարագաները միայն աղօթ-
քի նիւթ ընելու խնդրանքով կ'անցնինք հոգեւոր
կեանքին:

Ասկէ ճիշդ տասներկու տարիներ առաջ սկսաւ
հոգեւոր գործը Մարսէյլի մէջ ձեռամբ վեր, Ժ.
Կ. Պարսուեման եղբօր, քաղաքիս պանդոկնե-
րէն միոյն մէկ սենեակին մէջ: Երկու շաբաթ
յետոյ Փրկութեան Բանակի մէկ պզտիկ սրահը
գտնուեցաւ ժողովները հոն սարքելու եւ յետոյ
Ֆրանսական եկեղեցի մը, ուր միայն քարոզա-
ժողով տեղի ունեցած է մինչեւ 1935:

Հեռուն գտնուողներուն թերեւս միտքն է մեր
կիրակի երեկոյեան ժամը 6ի աղօթաժողովը, որ
երբեմն 2 կամ 2 ու կէս ժամ կը տեւէր: Այս
ժողովներուն մէջ Տէրը մեզ մեծ օրհնութիւննե-
րով կ'օրհնէր եւ որոնց մէջ շատեր ալ ապաշխա-
րեցին ու այն ատենէն ի վեր հոգեւոր կեանքը
կ'ապրին: Սոյն ժողովները հիմա քարոզաժողո-
վէն անմիջապէս յետոյ տեղի կ'ունենան, այսին

քըն ժամը երեք ու կէսէն սկսեալ: Այս ժողովներուն արդիւնքն ըլլալով էր որ Տէրը մեր համայնքէն ընտրեց եւ կանչեց 5 զաւակներ, որոնք ինքզինքնին Տէրոջը նուիրեցին Անոր գործին մէջ ծառայելու, որպէս հովիւ, քարոզիչ եւ միսիոնար:

Որովհետեւ հայերը հետզհետէ սկսան ցրուիլ քաղաքիս զանազան արուարձանները, մենք ալ ստիպուեցանք ժամանակի պահանջին համաձայն գործն ալ ընդարձակել:

Հիմա քաղաքին կեդրոնէն զատ ուրիշք տարբեր արուարձաններ, որոնց մէջ ժողովներ տեղի կ'ունենան կամ եկեղեցւոյս կողմէ վարձուած սըրահներու մէջ, կամ սիրելի եղբայրներու կողմէ մեզի տրամադրուած սենեակներու մէջ: Բացի քաղաքէն ու արուարձաններէն, ուրիշք չա Սիւթայի գործն ու Նիսի հոգեւոր գործը, որ քանի մը տարիներէ ի վեր գոյութիւն ունի: Այս տեղերուն մէջ հոգեւոր պատիկ խումբեր կը գտնուին, որոնք շաքաթամիշին մէկ կամ քանի մը անգամներ իրարու քով կը հաւաքուին: Վերջերս էքս քաղաքին մէջ ալ հաւաքոյթներ սկսան, սոյն քաղաքին մէջ գտնուած սակաւաթիւ հայոց մէջ ալ Աւետարանի ձայնը լսելի ընելու: Փա՛ռք ըլլայ Տէրոջը այս բոլոր ճիւղաւորումներուն համար: Տեղեր, ուր սրահ չունինք, բնականաբար չենք կրնար այն ազատութիւնով գործել, ինչպէս պիտի կարենայինք, քանզի ազօթաժողովներէն զատ կարեւոր տեղ մը տալու ենք մանկանց հոգեւոր դաստիարակութեան, որու պակասը այս երկրին մէջ ի մասնաւորի շատ զգալի է: Այս պակասը հարց մըն է որուն համար կ'ազօթենք, եւ կը խնդրենք բոլոր սիրելի ընթերցողներէն պատերազմակից ըլլալ մեզի հետ:

Շաքաթ օրէն զատ գրեթէ ամէն օր ոեւէ արուարձանի մը մէջ ազօթաժողով մը տեղի կ'ունենայ: Իսկ Զորեքշաբթի օրը չորս զանազան տեղերու մէջ կէսօրէ յետոյ կամ իրիկունը: Ընդհանուր ժողովներու օրը Կիրակին է: Այս արտաքին կազմակերպութեանց ցանցին նպատակն է խօսքին քարոզութիւնը եւ հոգիներու փրկութիւնն ու Աստուծոյ եկեղեցիին վրայ աւելնալը: Մեզ ճանչցողները գիտեն թէ ինչ ըսել կ'ուզենք Աստուծոյ եկեղեցի ըսելով: Այս պաշտօնն ունենալով ինչպէս ողորմութիւն գտանք, չենք ձանձրանար, եւ խորամանկութիւնով չենք վարուիր, ինչպէս ոմանք հեռուէն կամ մօտէն պիտի սիրէին այդ շարժառիթը հագցնել մեզի եւ զմեզ պիտակաւորել որպէս մարդորս: Այո՛, եթէ կ'ուզեն մարդորս՝ Յիսուսի համար եւ մեր բաղձանքն

է եւ ազօթքը, որ քիչով կամ շատով ամէնքն ալ Յիսուսի համար որսացուէին, քանզի Անոր մէջ է խաղաղութիւնը եւ ո՛չ թէ ոեւէ յարանուանութեան մը: Տէրը այս կէտին մէջ անա օրհնեց զմեզ տարիներու ընթացքին մէջ, տարուէ տարի նոր հոգիներ արթնցնելով եւ զանոնք փրկելով: Օրհնեալ ըլլայ ինքը: Այս ընդարձակ գործը յայտնի է թէ մէկ հոգիի գործ չկրնար ըլլալ: Ծանրաբեռնեալ ըլլալով արդէն եկեղեցիի եւ «Բանքեր»ի խմբազական հոգնքով եւ ամենօրեայ պատահական գործերով, անկարելի պիտի ըլլար ստորագրելու սոյն գործը ի զուի հանել, եթէ ինձ օգնական չըլլային իմ սիրելի գործակիցներս, եղբայրք Կիւլջան Պատաքեան, Վահան Սահակեան եւ Սամուէլ Պազգալեան եւ Եսթեր քոյր Տէմիրճեան:

Մեր հոգեւոր գործին կարեւոր մէկ ճիւղն է Ե. Ք. Լ. որ ամէն Հինգշաբթի իրիկուն իր ժողովները կ'ունենայ քաղաքիս եւ Սէն Լուի մէջ, ինչպէս նաեւ կիրակնօրեայ զպրոցները, որոնք հետզհետէ հաստատուն հիմերու վրայ կը դրուին եւ կանոնաւորապէս կը շարունակուին:

Մանկանց մէջ հոգեւոր գործը խիստ անհրաժեշտ է ամբողջ աշխարհի վրայ եւ մասնաւորապէս երկրին մէջ, քանզի հոս ոեւէ կառավարական զպրոցի մէջ գոյութիւն չունի կրօնի դաս: Մեր մանուկները այս կերպով զրկուած են տարրական կրօնական դասէ եւ եթէ մենք Կիրակին եւ Հինգշաբթին անոնցմով չզբաղինք, անոնք ալ զերկու օրերը փողոցէ փողոց պիտի լծափառին միայն չարութիւն սորվելով ու սորվեցնելով: Այդ սիրելի զաւակներուն բարոյական եւ հոգեւոր վիճակին վրայ ցաւ քաշելով, ազօթելով, սկսանք հոս հոն հաւաքել զանոնք: Սկիզբները մեզի այնպէս կուգար որպէս թէ անոնք մեր ազգին զաւակները չըլլային, թէ՛ կը թուէին եւ թէ լեզուի տեսակէտէն: Բայց ժամանակի ընթացքին անոնք փոխուեցան: Այժմ աշակերտաց թիւն է 700, որ կիրակիէ կիրակի կ'աւելնայ: Այս զպրոցները կարգերու բաժնուած են եկեղեցիիս 23 եղբայրներու եւ քոյրերու հոգածութեան տակ ու կը վարժուին Աստուծապաշտութեան մէջ:

Շատ պատիկ տեղեկութիւն մը տուինք տեղւոյս Տէրոջը գործին մասին, ստիպուած ըլլալով զանց առնել դեռ կարգ մը յիշատակելու արժանի կէտեր տեղի նեղութեան պատճառաւ: Կան նաեւ կարգ մը ներքին ապրումներու քաղցր յիշատակներ, որոնք ներկաներու բաժին կ'ըլլան եւ տեղեկագրել կարելի չէ: Տէրը թող օրհնէ այս տեղեկագիրն ալ ամենուս համար: Զ. Ն. Ղ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԵՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԸՆ ԵՄ

○○○○○

Քրիստոնեայ մը Աստուծոյ ծնած է, Քրիստոսի մէջ պատրաստուած եւ Ս. Հոգիին բնակարանը: Անոր բնութիւնը նորոգուած է, միտքը լուսաւորուած, հոգին փոխուած: Անիկա չէ այն ինչ որ էր երբեմն, քանզի շնորհքը իր մէջ փոփոխութիւն մը կատարած է: Անիկա չէ այն ինչ որ ինք կը փափաքի ըլլալ, քանզի շնորհքը գեո կատարեալ չէ եղած: Անիկա չէ այն ինչ որ գեո նա պիտի ըլլայ, քանզի շնորհքը երկնային փառաց մէջ իր կատարելութեան պիտի հասնի: Քրիստոսի գիտութիւնը անոր գանձն է, Քրիստոսի միտքը անոր փառաբանութիւնը, Քրիստոսի սէյրը անոր երգն է, Քրիստոսի նմանիլ անոր կեանքն է, եւ Քրիստոսի հետ ըլլալ անոր բարձրագոյն փափաքը: Նա հաւատարմութիւն մէջ կը կենայ, Քրիստոսը իր մէջ կ'ընդունի եւ Քրիստոսի կը նայի: Անիկա Քրիստոսի խօսքերը կը լսէ, Քրիստոսի քայլերուն մէջ կը քայլէ եւ Քրիստոսի հաճելի ըլլալ կը վնտոէ: Նա կը խօսի Քրիստոսի թաղաւորութեան լեզուն, կը յարգէ Քրիստոսի օրէնքները, կը հնազանդի Անոր պատուիրանքներուն, կը կրէ Անոր համազգեստը եւ կ'ապրի Անոր փառքին նուիրուած: Իր մէջ Քրիստոսի կեանքը իր էութեան սկզբունքը կը կազմէ, եւ որովհետեւ Քրիստոս կ'ապրի, ինք եւս պիտի ապրի: Քրիստոնեային մէջ Քրիստոս կ'ապրի, կը խօսի եւ կը գործէ: Ինքը աշխարհի վրայ Քրիստոսի ներկայացուցիչն է, ժարդոց առջեւ Անոր վկան եւ Աստուծոյ առջեւ Անոր հետեւորդը: Քրիստոնեան Քրիստոսի սորվեցուցածներուն մօտիկ կ'ընէ, Քրիստոսի խաչի զոհին վրայ կը հանգչի, իր խորհրդածութեան Քրիստոսը նիւթ ունենալով կ'օգտուի եւ ուրախօրէն կը հնազանդի Քրիստոսի օրէնքներուն: Նա ինքզինքին կը հարցնէ՝ Քրիստոս ի՞նչ գիտնալու, ի՞նչ ընելու եւ ի՞նչ վայելելու կը փափաքի: Քրիստոսը ճանչնալ մտաւոր Քրիստոնէութիւն է, Քրիստոսի հնազանդիլ, գործնական քրիստոնէութիւն, Քրիստոսը վայելել՝ փորձառական քրիստոնէութիւն եւ Քրիստոսի նմանիլ՝ կատարելագործուած քրիստոնէութիւն: Անօթի մարդուն համար հացը ինչ որ է, ծառաւ մարդուն համար ջուրը ինչ որ է, հեղձուցիչ տաք օրօտն մէջ

ժայռի մը շուքը ինչ որ է՝ ախպէս է Քրիստոս քրիստոնեային:

Քրիստոնեան աշխարհի մէջ կ'ապրի, բայց աշխարհէ չէ, աշխարհայիններու միջեւ, բայց անոնցմէ զատուած, աշխարհի մէջէն անցնելով, բայց առանց անոր կապուելու: Կռապաշտը իր կռուքերովը կը պարծի, մահմետականը իր սուտ մարդարէով, բայց Քրիստոնեան կը պարծի միայն Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը: Քրիստոնեան պատերազմիկ մըն է եւ պէտք է կռուի, բայց նա նաեւ յաղթող մըն է եւ պէտք է կոիւլը շահի: Քրիստոնեան երկրի վրայ կը կենայ, բայց երկինքի մէջ կը բնակի. նա անապատին մէջ պանդխտ մըն է, բայց երկինքի համար արձանադրուած հպատակ մը, իր քաղաքացիութիւնը երկինքի մէջ է: Նա Քրիստոսի զրօշմն է, չօրր արտացոլումը (reflection), Սուրբ Հոգիին տաճարը: Քրիստոնեան հակառակութիւն մըն է, անհատական հանդէպ իր հաւատքովը, անառակին հանդէպ իր կեանքովը, միայն բարոյական մարդուն հանդէպ իր սրտովը եւ փարիսեցիին հանդէպ իր հոգիովը: Իր ազգաբանութիւնը Եհովայէն է, իր բնութիւնը երկինքէն եւ իր անունը Անտիոքէն: Ո՛հ, սվ Քրիստոնեայ, մեծ է քու աստիճանդ, լուսավայլ է քու փառքդ, անսահման է քու յոյսդ: Ամէն բաները քու կողմն, դուն Քրիստոսին եւ Քրիստոս Աստուծոյ:

Եթէ դուն քրիստոնեայ մըն ես, դուն կը սիրես Սիօնի յաջողութիւնը եւ կ'ազօթես Երուսաղէմի խաղաղութեան համար: Այս աշխարհ գալու մէջ Քրիստոսի պատուիրակութիւնն էր աշխարհը փրկել, եւ եթէ դուն նոյն միտքը ունիս որ Անոր մէջ էր, դուն ոչ միայն կ'ուրախանաս խաչին բոլոր յաղթութիւններովը, հապա կ'աշխատիս բազմապատկելու եւ տարածելու զանոնք: Դուն քու կարողութիւններդ կուտաս Քրիստոսի շահը առաջ տանելիք հաստատութիւններ կանգուն պահելու, ըլլալ միսիոնարութիւններու մէջ, Ս. Գրոց դպրոցներու մէջ, որբանոցներու կամ ապաստանարաններու մէջ՝ Աստուծոյ քեզ յանձնակատար ըրած է Իրեն հետ գ. քաղաք ըլլալու. եւ եթէ դուն քու տեղիդդ եւ բաժինիդ մէջ հաւատարիմ ըլլաս, Անոր շնորհքը հերիք պիտի ըլլայ քեզի կեանքի մէջ, մահուան մէջ եւ յաւիտենականութեան մէջ: Սիրելիս, դուն քրիստոնեայ մըն ես:

(GOD'S REVIVALIST)



ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ

ՄԱՏԹ. ԺԷ. 8

(Իրականութիւնն կեանքիս մէջ)



Անյոյսիս յոյսը Եփես. Բ. 12, 13,

Անլոյսիս լոյսը Բ. Կոր. Դ. 6,

Բիւր մեղաց Քաւիչս Եփես. Ա. 7

Յիսուան է:

Փրկութեանս հիմը Ա. Կոր. Գ. 11,

Ապաւինութեանս վէճը Սաղ. ԿԲ. 6, 7,

Անշարժ խարխալս Եբր. Զ. 18, 19

Յիսուան է:

Վշտաց մէջ Մխիթարիչս Յովհ. ԺԴ. 1,

Նեղութեան մէջ պաշտպանս Բ. Օրին. ԼԳ. 27,

Յաւի մէջ Սփոփիչս Եսայ. ԾԳ. 3, 4

Յիսուան է:

Որբունհիս Հայրը Յովհ. ԺԴ. 18,

Լըքեալիս Տէրը Սաղ. ԻԷ. 10:

Խոցեալիս դարձանը Սաղ. ՃԽԷ. 3

Յիսուան է:

Բերանիս համ տուողը Սաղ. ՃԺԹ. 102, 103,

Խօսքերս քաղցրացնողը Եփես. Դ. 32,

Կեանքս երջանկացնողը Տիտ. Բ. 13

Յիսուան է:

Հաւատարիմ Բարեկամս Յովհ. ԺԵ. 14,

Կեանքիս անբաժան ընկերը Մատթ. ԻԸ. 20,

Սիրոյս առարկան Երզ. Ա. 4

Յիսուան է:

Խաղաղութիւն տուողը Յովհ. ԺԴ. 27,

Սիրտս ուրախացնողը Սաղ. ԼԳ. 21, 22,

մնայուն բարիքս Սաղ. ԺԶ. 2

Յիսուան է:

Կարեկից Հայրըս Ովս. Ժ. 8,

Դիմած բարերարս Ղուկ. Ժ. 31-34,

Անարժանս յաւէտ սիրողը Երեմ. ԼԱ. 3

Յիսուան է:

Պաշտելի Ստեղծիչս Մատթ. Դ. 10,

Ազատարար Փրկիչս Տիտ. Բ. 13, 14,

Անտէրիս Առաջնորդը Եսայ. ԽԸ. 17

Յիսուան է:

Ապագայի յոյսս Տիտ. Բ. 13,

Յաւիտենական կեանքս Յովհ. ԺԴ. 6,

Դարերով երկրպագելիս Յովհ. Դ. 23

Յիսուան է:

Օրհնեալ յոյս, օրհնեալ յոյս,

Ի՞նչ մեծ շնորհք եղկելոյս,

Փրկիչս պիտի տեսնեմ զէմ առ զէմ

Եւ յաւիտեան զի՞նք վայելեմ,

Ի քաղաքն ոսկեղէն:


Տէրոջմով սիրելի եղբայրներ եւ քոյրեր, անձնական փորձառութիւնով տեսայ որ ամէն ինչ անցաւոր է: Մատթ. ԺԷ. 8 համարը իրականութիւն եղաւ ինծի: Իմ մնայուն բարիքս միայն ՅԻՍՈՒՍ է: Եթէ նեղութեան մէջ ես, ապաւինելով Յիսուսի՝ մխիթարուէ: Եթէ դեռ զԱյն չունիս, փնտոէ ու պիտի գտնես, եւ Անով «ամէն բարիք» գտած պիտի ըլլաս:

Յիսուսի պատուական արեամբ փրկուած

ՍԱԹԵՆԻԿ ԶԱԳՐԵԱՆ

Փօնտ Օպէնաս

ՔԱՆԻ ՄԸ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Արդարեւ Տէր Յիսուսի խօսքը որ Յայտ. Գ. 4ի մէջ կ'ըսէ, Փրօֆ Մարտիրոս Պուճիգանեանի համար մեծապէս յարմարող վկայութիւն մըն է: «Սակայն քանի մը անձեր ունիս Սարդիկէի մէջ որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին եւ ճերմակներով պիտի պարտին ինծի հետ, քանզի արժանի են»: Եւ կ'երեւի թէ մեր ուսուցիչը այս խօսքէն համոզուած իր անդամակցութիւնն ու գործակցութիւնը պահած էր եկեղեցիի մը մէջ, ուր անշուշտ վկայ մը եղաւ Տէրոջը մեծ Շնորհքին: Ու թէեւ իր մասին որոշ յիշատակ մը կամ տեղեկութիւն մը չունինք, թէ այս վերջին ժամանակներուն մէջ իրեն պէս գործաւոր մը ի՞նչ դորձեր ունեցաւ Տէրոջը հունձքին ու այդիւն մէջ, բայց նախ քան իր Ամերիկա ժամանումը, իր ուսուցչի եւ զրացիի հանգամանքով ըրած ազդեցութիւնները իմ վրաս՝ ժամանակ է որ ես վկայեմ:

Շատ նկատած եմ որ հեղութեամբ կը տանէր իր մասին յաճախ ըստած բամբասական խօսքերը, որոնք թէն ետեւէն կը խօսուէին, բայց պատճառ մը չէր որ չլսէր ինքը: Մեծատաղանդ ուսուցչապետի մը եղբայրն ըլլալով, իրեն հանդէպ առհասարակ արհամարհանք ունէին շատեր, եւ անպատկառ արտայայտութիւններ պակաս չէին ընէր ըսել ուղեւով թէ ինչո՞ւ ինքը ջարդերէն ազատուեցաւ. կարծես ինք յանցաւոր ըլլար եղբօրը նահատակուելուն եւ իր ողջ մնալուն համար: Բայց Տէրսմէ իր կեանքը իրեն աւանդ վերադարձուիլը աւելի աղէկ բաժին մը չհղաւ, որովհետեւ եղաւ ժամանակ մը Խարբերդի մէջ, որ, ամէն օր մահուան կը մատնուէր ապրուստին համար իր բազմանդամ ընտանիքէն զատ զրեթէ իր ամբողջ գերդաստանին՝ որ համայնք մը կը հաշուուէին: Եւ աւելի դժուար էր մանաւանդ որ ինքը ազատ չէր դարձել, հացի պայքարին մէջ ենթարկուելու ժամանակի պայմաններուն, որոնք համաձայն չէին քրիստոնէական կանոններուն: Եւ նամանաւանդ փորձութիւնը կրկնապատիկ էր իրեն համար որ կեանքի ապարէզ ու այդ նեղ օրերուն ապրուստի միջոց ունէր. ե-

րաժշտութիւնը, եւ հարկաւ իր թուրք աշակերտները իրմէ հոգեւոր երգեր սորվելու չէին դար: Ու թէպէտ իրեն հանդէպ հակակրանք տածողներ շատ կային, իր քրիստոնէական կեանքին ու փորձառուութեան երաժշտական դասընթացներուն համար մէկը չկրցաւ զինք քննադատել, որովհետեւ ոչ մէկ պատճառ տեղի տուած էր:

Մէջըրէի եկեղեցիին մէջ ժողովուրդէն արհամարհանքով որակուած «Փիփէ քոյրեր» ու դասակարգ մը կար, որոնք թաղային ժողովներ կ'ուսնային հովիւին՝ վեր. Ա. Զ. Եղոյեանի առաջնորդութեամբ: Օր մը երբ ժողովէն կ'ելլէին, լըսեցի մէկէ մը որ «Փիփէ քոյրերը կ'արձակուին» կ'ըսէր: Ուշադրութիւնս այն կողմ դարձուցի, տեսայ իր հասակովն ու ֆէսովը նաեւ փրօֆէսօրը: Այդ ազդեցութիւնը շատ տպաւորիչ եղած է վերաւ մինչեւ այսօր:

Իր ուսուցչական կեանքէն տպաւորութիւնս շատ է: Շիտակը խոստովանելով՝ չէի սիրեր ո'չ զինքը եւ ոչ իր դասերը (երբի եւ անգլիարէնի) վասնզի առիթ չէինք ունենար ո'չ կատակելու իրարու հետ, ոչ ալ զինքը զբաղեցնելու դասէն դուրս խնդրով մը, ինչպէս սովորաբար կ'ընէինք ուրիշներու քով՝ չպատրաստուած դասի մը ընթացքին: Եւ յայտնի է հիմա, որ զինքը չսիրելուն պատճառը ոչ այնքան իր պահանջած օրինապահութեան համար էր, հապա այն տարբերութեան համար որ իր հոգիին ու մեր չաբաճի բնութեան մէջ կար:

Մէկ վերջիշում մըն ալ Անթիլիասի կեանքէն: Հոս թէպէտ ինքը տնօրէն էր, իրեն ստորադաս ուսուցիչներուն կը հանգուրժէր, որոնք անհաւատ ու անառտուած սկզբունքներով դիւրբոնած էին իրեն հանդէպ: Բայց որքան ատեն որ պաշտօնավարեց, տեղի չտուաւ որ մուտ դործէ դպրոցէն ու որբանոցէն ներս քրիստոնէական կանոնի հակառակ բաներ, որոնք յիտոյ խուժելով ներս մտան երբ ան հեռացաւ հոնկէ: Երբ Անթիլիասը կը վերջիշեմ, ա-

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

«Բուր գիրքը Աստուծոյ շունչն է» Բ. Տիմ. Գ. 16

Ընկերոջս վսիսն Ստամպուլեանին

Անգուգելի պարգեւներէն անհունօրէն գերազանց՝
Ինձ ուղարկած այս կենսածոր Աստուածաշունչըդ, վահան,
Առածիս պէս ջերմ յուզումով համբուրեցի զայն սրտանց,
Եւ ուխտ ըրի — Զայն միշտ պահել, սիրել, սերտել յաւիտեան:

Օհ, կ'ըզմայլիմ սա գերբնական Գրքին առջեւ գերագոյն՝
Զի նա թըշուառ եւ անգրախոյզ խաբխափող կոյր համայնքին
Հոսարձակն է՝ վեհ-ջահակիր ռահ: | | ս. | մլ հանգոյն:
Նա մեր լոյսն է, նա մեր յոյսն է, նա մեր կեանքն է թակագլին,

Կեանքի դեղն է մահամերձին, մոլարներուն ուղեցոյց,
Կոյրերուն աչք, կաղերուն ոտք, աննեցուկին գաւազան,
Ու այս նըսեմ, գըձուծ կեանքէն դէպի ՎՐՍԵՄՆ, անմատոյց:
Բարձրացընող միակ վերելքն՝ այս Որեժ Գիրքն է սրբազան:

ՍՍՍՈՒԷԼ Պ.

ոխիթը կը համարիմ յիշել նաեւ իրենց տունին մէջ հանգիստած մէկ կարեւոր ճշմարտութեան, եւ պատուական կը համարիմ այս առիթը: Վեր. Եղոյեանի մէկ նամակը ձեռքս անցաւ իրեն գրուած, որուն մէջ պատուելին կ'ըսէր թէ հոս ամերիկացիներուն երբ մեր ջարդերուն մասին կը պատմեմ եւ թուրքերուն մեզի ըրած վայրագութիւնները, շատ բնական կը գտնեն եւ ազգերու իրարու հանդէպ թշնամութիւնը բան մը չէ կ'ըսեն. մենք համացեղ եւ համարիւն մարդիկ եղբայրներ, զիրար կը սպաննենք: Եւ պատուելին կը յիշեցնէր այս առիթիւ Սուրբ Գրոց ճշմարտութիւնները Տէրոջը զաւուն յարակցութեամբ:

Փրօֆէսորին Ամերիկա ժամանելուն առթիւ քաղաքին օրաթերթերէն մին անոր ժամանման լուրը սա հեղնանքովը կը ծանուցանէր, «Փրօֆ. Մ. Պուճիգանեան Սուրբայէն Պօթըն ժամանեց. մեր խմբագիրը Սուրբոյ հայութեան մասին ուղած տեղեկութեան ի պատասխան, յայտարարեց, Սուրբոյ հայութեան փրկութիւնը կը կայանայ Տէրոջը դառնալուն եւ Անոր Խօսքին հրահանգելուն մէջ»: Ու թէեւ թերթը ծաղրանքի առած էր զայն, բայց յայտնի է թէ փրօֆէսորը քաջ վկայութիւն մը տուած էր: Եւ այս է իմ վերջին տպաւորութիւնս իրմէ, ու օրհնեալ տը պաւորութիւն մըն է ասիկա:

Շատ ազդու տպաւորութիւն մըն ալ իր մահունան լուրը եղաւ իմ վրաս: Երբ լսեցի թէ յանկարծամահ եղած է, յիշեցի այն «աչք գոցել բանալու» վայրկեանը որ մեր առջեւ ալ դրուած է, եւ խրատ մը եղաւ ինծի ա'լ աւելի պատրաստ գտնուելու այն պահուն համար, երբ մենք չենք կարծեր:

Սիրելի ուսուցիչիս մասին այս տպաւորութիւններս պատմելով հին բարեկամութեան զգացումներս ալ կը յորդին իր ընտանիքին ամէն մի անդամին՝ մանաւանդ դասընկերիս Արսէնին վերաբերմամբ, եւ Աստուծոյ Խօսքին վկայութիւնը կ'ուզեմ յիշեցնել, թէ «Պատուական է Տէրոջը առջեւ իր սուրբերուն մահը» Սաղ. ՃԺԶ. 15:

ԼԵՒՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Հոս արեւը ալ չը մարիր,
Հոս բնակիչք ա'լ չեն մեռնիր:
Մէկդի թողունք հին ճամբաներ,
Միշտ մտածենք վերին բաներ:
Տէր իմ շնորհէ ես ալ ապրիմ
Մինչեւ ի մահ հաւատարիմ:

«Բանբեր» Յուլիս, 1934

Մ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

“ԳՆԱ... ՈՒ ՊԱՏՄԷ,,

○○○○○—○○○○○

Յիսուս արձակեց զանիկա ու ըսաւ, դարձիր քու տունդ ու պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ: Ան ալ գնաց ու բոլոր քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս իրեն ըրաւ: **Զուգ Ը. 38, 39**

Տէրոջը հրամանն է «Գնա ու պատմէ»: Ով որ հնազանդած է այս պատուէրին, օրհնուած է եւ օրհնութեան պատճառ եղած է: Որովհետեւ ամէն նոր վկայութիւն լսելուս նոր լոյս, նոր ուրախութիւն եւ նոր զօրութիւն կ'ստանանք, պարտաւոր եմ ես ալ իմ կարգիս ուրիշ հոգիներու օգտակար ըլլալ, պատմելով այն՝ ինչ որ Յիսուս ինծի ըրաւ:

Ծնած եմ 1895ին, Սերաստիոյ Ալաքիլիսէ գիւղը, լուսաւորչական ծնողքէ: Հայրս մեռաւ երբ վեց տարու էի: Մայրս թէեւ անուս, բայց շատ բարեպաշտ կին մըն էր: Մօրեղբայրս ապաշխարած ընտիր հաւատացեալ մըն էր: Աստուածաշունչը ահաւորին՝ ամէն տուն կ'այցելէր հոգիներ վաստկելու փափաքով: «Հոգիներ վաւտկողը իմաստուն է» Առակ. ԺԱ. 30:

Մայրիկս, իր առած հոգեւոր լոյսը եւ փրկութիւնը անոր կը պարտէր, որովհետեւ մօրեղբայրս անպակաս էր մեր տունէն, եւ ամէն այցելութեան առանց Ս. Գրքէն գլուխ մը կարդալու, բացատրելու եւ ազօթելու՝ չէր մեկնէր: «Ինչպէ՞ս գեղեցիկ են խաղաղութիւն աւետարանողներուն եւ բարի բաներու աւետիս տուողներուն ոտքերը»: Իր կարգին մայրս ալ կը ջանար զիս դաստիարակել Տէրոջը վախովը: «Նեղօք եւ բարի եղիր զաւակս, ազօթք ըրէ եւ Յիսուսը սիրէ որ երկինք երթաս»: Մօրս բերնէն ելած շարունակական խրատը այս էր:

Տասնըվեց տարիքիս ամուսնացայ: Ամուսինս եւ իր գերդաստանը ուր հարս զացի, Աստուծմէ բոլորովին օտարացած անկրօն մարդիկ էին: Ինքնաբերաբար ես ալ ազդուեցայ անոնցմէ, ինչպէ՞ս գրուած է, «Զար ընկերակցութիւնը բարի վարքը կ'ապականէ»: Հիմա կը հասկնամ թէ Առաքեալը ինչու կը զգուշացնէ Աստուծոյ զաւակները անապաշխարներու հետ ամուսնանալէ. ըսելով, «Անիաւատներուն հետ օտարախառն լըծակից մի ըլլաք» Բ. Կոր. Զ. 14-18:

Ամուսնութենէն մէկ երկու տարի վերջ հայաշինը եղեռնը վրայ հասաւ ու մենք տեղահան-

ուեցանք: Ամուսինէս սկսեալ մինչեւ ամենահեռաւոր ազգականս սուրի բերնէ անցան: Զարմանալի է որ Տէրը ինծի պէս անարժէք մէկուն խնայեց, մինչդեռ «հազար հոգի իմ քովէս ու տասը հազար իմ աջ կողմէս ինկան»:

Արաքները մեզ գերեզմարեցին Համա, անկէ ալ Սալիտի ու Հոմա: Այս տեղերուն մէջ քանի մը հայրենակից կիներու հետ մեծ չարչարանքներով եւ տաժանակիր աշխատութիւնով ապրեցանք երկու տարի: Այս ամենադառն օրերուն մէջ՝ իմ միակ մխիթարութիւնս, մօրմէս ստացած Աստուածայաշտութեան տարրական դաստիարակութենէն կը բղխէր: Կը յիշէի անոր ըրած պարզ պատմութիւններն ու խորատները: Հաւատքով ու յուսով զօրացած կ'սկսէի աղօթել եւ Աստուծոյ առջեւ լա՛լ: Ամէն աղօթքէ վերջ կարծես բոլոր ցաւերս, վախերս եւ մտաւանջութիւններս կը փարատէին եւ սիրտս խաղաղութեամբ կը լեցուէր: Յաճախ ծայրայեղ անօթութեան կը մատնուէինք: Այդ պարագային գաշտերը կ'ելլէինք խոտ փնտռելու: Կը յիշեմ, ամէն անգամ որ բերանս դնելու տեւէ բան զըտնէի, կը հաւատայի թէ Աստուած ինք զիս կը կերակրէ, եւ մեծ ուրախութեամբ կ'օրհնէի զԱյս ու կ'ըսէի, «Փա՛ռք Քեզի ով Աստուած, որ այս անգամ ալ երկինքի թռչուններուդ պէս զիս կերակրեցիր»: Հիմա երբ կը մտաբերեմ այդ դարհուրելի օրերը եւ Տէրոջս ինծի ըրածները, ինքնաբերաբար Սաղմոսերգուն պէս կ'աղաղակեմ՝ «Ի՞նչ հատուցանեմ Տէրոջը, Անոր բոլոր ինծի ըրած բարութեանը փոխարէն» Սաղ. ՃԺԶ. 12:

Երկու տարի վերջ ինծի վիճակակից քանի մը կիներու հետ Հալէպ ապաստանեցանք: Անկէ ալ Ատանա փոխադրուեցանք: Որքան որ մանկութեանս շրջանին մօրմէս բարի բաներ սորված էի, տակաւին ճշմարիտ ապաշխարութեան եւ փրկութեան շուրջ բոլորովին անտեղեակ էի: Հոս սկսայ հոգիի մեծ ծարաւով մեր հայրենի եկեղեցին յաճախել: Դժբաղդաբար բոլոր ծեսերը, արարողութիւնները եւ ընթերցանութիւնները զբաբառ ըլլալով տեւէ բան չէի հասկնար: Ծարաւ կ'երթայի հոն եւ աւելի ծարաւած ու տրտմած տուն կը վերադառնայի: Փա՛ռք հոգիներուն Հօրը, որ հիմա կենսատու խօսքին առատութիւնը պարզեւած է ինծի եկեղեցիին մէջ:

Կիլիկիոյ մէջ երկրորդ անգամ ըլլալով ամուսնացայ եւ Պօլիս մեկնեցանք: Այդ տեղ թէն ինքնակամ բարեխառ վիճակի մը հասնաք, բայց հոգեւորապէս՝ խիստ ծանր եւ տագնապալից վիճակ մը ունէի: Տէրոջը Սուրբ Հոգին ներսիդիս

կը գործէր: Զաւակներէս մէկը մեռաւ: Այս դէպքը պատճառ եղաւ որ աշխարհային բաներէ բոլորովին հրաժարելով սկսիմ շատ լրջութեամբ յաւիտեանական խնդիրներով զբաղիլ: Ըսի թէ ապաշխարութեան եւ փրկութեան շուրջ բոլորովին անտեղեակ եւ խաւարամիտ էի: Ու ես անձնական ջանքերով փրկութեան ու խաղաղութեան ճամբան կը փնտռէի: Դա՛ռն յուսախաբութիւն եւ ի զո՛ւր խարխափում: Ինծի պէս մեղաւոր ակէ մը ի՞նչ բարի գործ կրնար բղխիլ որով կարենայի արդարանալ եւ փրկուիլ: 25^օ որ մարդուն սիրտը ամէն բանէ աւելի խաբեբայ ու խիստ չար է: Արդ, ի ծնէ չար սրտիս արտադրած ամենաբարձր փափաքներն ու խորհուրդները, ամենանուիրական ջանքերն ու էն գովելի գործերն իսկ Սուրբ Աստուծոյ առջեւ «պղծութիւն» կը նկատուի, վասնզի զրուած է, «բայց ամէնս պիղծ բանի պէս եղանք, ու մեր բոլոր արդարութիւնները դաշտանի լսմի պէս են» (Եսայ. ԿԴ. 6):

Շնորհաց Տէրը տեսնելով հոգեկան տուայտանքս եւ փրկուելու անկեղծ փափաքս, իմ առջեւ շնորհքով արդարացման եւ ձրի փրկութեան ճամբան բացաւ՝ վերջապէս: 1923ին Պրանսո փոխադրուեցանք: Ամիս մը Մարսիլիա բնակելէ վերջ Լա Սիօթա մեկնեցանք: Հոս, երկրորդ անգամ ըլլալով մանչ գաւակ մը գերեզման դրի: Այս դառն սուղը զիս աւելի Տէրոջը մօտեցուց: Կ'ըզգայի թէ Աստուծմէ դուրս տեւէ մէկը չկրնար կակճացող սիրտս մխիթարել: Ծերունի Գէորգ եղբայր Երէցեան, թէեւ անուս, բայց անկեղծ ջանքով ինծի Տէրոջը խօսքը սկսաւ խօսիլ եւ զիս համոզել որ Փրկչին յանձնուիմ: «Քրիստոսի լիութեամբ Աւետարանին լոյսը» տակաւ առ տակաւ սկսաւ մտքիս խաւարը փարատել:

1927ին Տէրոջը պարզ բայց անկեղծ մէկ գաւակը Գարեգին պապան որպէս գրածախ Լա Սիօթա այցելեց: Աստուծոյ մաքուր խօսքին կարօտ քաշող քանի մը կիներու հետ ստիպեցինք օրաքաշող քանի մը կիներու հետ եղբայրը որ Լա Սիօթա ուայ հացի կարօտ այդ եղբայրը որ Լա Սիօթա հաստատուի եւ մեզի Տէրոջը ճամբան սորվեցնէ: Համոզուեցաւ եւ կեցաւ: Հազիւ մէկ երկու ժողովներ, ըրած էր, սկսաւ ստիպել որ փրկուելու փափաք եւ հաւատք ունեցողներ ոտքի ելլեն եւ հրապարակաւ աղօթեն: Ներքնապէս սաստիկ կ'ուրախանայի այս նոր կերպ ժողովներուն, մայրաւանդ Աւետարանի պարզ քարոզութեան եւ ձրի ու դիւրին փրկութեան աւետիսին համար: Բայց այնքան տարօրինակ եւ դժուար կուգար ինծի հրապարակաւ աղօթելը եւ յանձնուիլը, որ

անկարելի ըլլալու աստիճան դժուար կը թուէր ինծի: Բայց երբ լսեցի սա երկու խօսքերը, ներքին պայքարս անդիմադրելի դարձաւ, «Ով որ ամօթ կը սեպէ մարդոց առջեւ զիս դաւա՛նիլը, ես ալ ամօթ պիտի սեպեմ զանկա դաւա՛նիլը իմ Հօրս առջեւ որ երկինքն է»: Եւ երկրորդը՝ «Սրտով կը հիւսատայ մէկը արդարանալու, եւ բերնով կը խոստովանի փրկուելու համար»: Յիւրաւի «Աստուծոյ խօսքը կենդանի է ու գորեղ եւ ամէն երկայրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչեւ շունչը ու ոգին եւ յօդուածները ու ծուծը բաժնետու»:

Պզտիկ տատանումէ մը վերջ Գարեգին պապան մեր տունը հրաւիրեցի: Կարճ խօսակցութենէ մը յետոյ, հարցուցի այդ սիրելի եղբոր թէ արդեօք փրկուելու համար անպայման եկեղեցիին մէջ հրապարակա՞ւ պէտք է Տէրոջը յանձնուլիմ, հո՞ւ չե՞մ կրնար յանձնուիլ: «Անշուշտ, պատասխանեց Տէրոջը ծառան, ճիշդ հիմա՛, ճիշդ հոս կրնաս ապաշխարել եւ փրկուիլ»:

Սիրտս, մինչեւ այդ ժամուն զսպուած դիմադրութեամբ այնքան ուռած էր որ կը կարծէի թէ պիտի պայթի: Հագիւ ծունկի եկած էինք, երբ անդուսպ փղծկումով Տէր Յիսուսի առջեւ խորատկուեցայ: Այդ ժամուն իսկ հաշտութիւն, փրկութիւն եւ «խաղաղութիւն ունեցայ Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով»: Օրհնեա՛լ ըլլայ մեղաւորաց Փրկիչը Յիսուս: Հիմա բոլոր ուրախութեամբ կրնամ երգել.—

Յիսուս ներած է իմ մեղքերս,

Ազատ եմ, ազատ եմ...

Ալ Աստուծոյ որդի եմ ես,

Ազատ եմ, ազատ եմ...

Յաջորդ օր, ժողովին ընթացքին նորէն կոչ եղաւ որ ոտքի կայնին անոնք՝ որոնք կ'զգան թէ Տէրը իրենց սրտին դուռը կը զարնէ: Ես ինքզինքս համոզել ուզելով ինքնիրենս ըսի, ես արդէն ապաշխարած եւ փրկուած եմ, ալ պէտք չունիմ ոտքի կայնելու: Բայց ուրիշ ձայն մը ներսէն կ'ըսէր, «Ով որ զիս մարդոց առջեւ չի դաւանի՛ր...»: Զեմ գիտեր ինչպէս, միայն գիտեմ որ սաստիկ վախով ու դողով ոտքի վրայ ամենուն առջեւ Տէր Յիսուսը որպէս իմ անձնական Փրկիչս դաւանեցայ եւ աղօթեցի: Նրստած պահուս ծունկերս կը դողային ու ամբողջ մարմինս ուժաթափ էր, բայց սիրտս ուրախութեամբ կը տրոփէր ահաբեկութեամբի մը ճիւրաններէն ազատուողի մը պէս: Դո՛ւն թշնամիին յաղթեցիր, ով Յիսուս, եւ զիս փրկեցիր, բոլոր փառքը Քեզի:

Ու հիմա իմ ամենամեծ փափաքս է որ «խաղաղութեան Աստուածը զիս բոլորովին սուրբ րնէ, եւ իմ բոլոր հոգիս ու շունչս եւ մարմինս անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Բրիստոսի գալու ատենը» Ա. Թեա. Ե. 23:

Աստուծոյ ծառայութեան մէջ, բոլոր սուրբերուն հետ մէկտեղ, Տէր Յիսուսի փառաւոր յայտնութեան սպասող

Զեր քոյրը

ԼՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԿԵՆԱՅ ԱՇՈՒՆԵՐԷՆ

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆՁԻ ՄԵ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Զուիցերիոյ ամենէն լեռային մասերէն մէկուն մէջ, այսօր տակաւին կարելի է տեսնել հիւղակ մը, որուն յարդածածկ տանիքը թանձր մարախուղով պատած է: Մտիկ ընենք շատ ժամանակ առաջ հոն տեղի ունեցած դէպքի մը պատմութիւնը:

Թէեւ կէսօր է, տանը մէջ ամէն ինչ հանդարտ է, որպէս թէ անբնակ եղած ըլլար: Այսու հանդերձ հոն բնակող կայ, բայց շատ չանցած մահր իր գործը պիտի կատարէ: Ողորմելի խշտեակի մը վրայ պառկած է որբեւարի մը. մահիճին քով ծնրադրած է երիտասարդ մը՝ իր որդին, եւ մահամերձ մայրը իր վերջին օրհնութիւնը կուտայ անոր:

— Մնաս բարի, Պօղոս, կ'ըսէ ան... հայրդ 15 տարի է որ վերը ինծի կ'սպասէ. ես Տէրոջը քով կ'երթամ: Քեզի համար է որ Աստուած այսքան երկար ատեն զիս երկրի վրայ թողուց... դուն զիս կը սիրես, այնպէս չէ՞... բայց միեւնոյն ատեն աշխարհն ալ կը սիրես...: Հաճոյքները եւ սնտի բաները սրտիդ մէջ աւելի տեղ կը բռնեն քան թէ Աստուծոյ վերաբերեալ բաները. կ'աղաչեմ քեզի, Անոր դարձիր Յիսուսով փրկուիլն ստանալու համար...: Զիս թաղելէդ ետքը անշուշտ այս տեղէն պիտի հեռանաս եւ պիտի ծախես ջնջին ստացուածքը որ քեզի կը թողում. Աստուած քեզի առաջնորդէ եւ քեզ խրատէ... եթէ քեզի աւելի լաւ կը թուի, հացդ ճարելու համար ուրիշ տեղ գնա՛, բայց մէկ բան միշտ

քեզի հետ պահէ, իմ Սուրբ Գիրքս... մայրս զայն ինծի տուաւ, ես ալ քեզի կը յանձնեմ: Այս գիրքը հայրերուդ խրճիթէն զուրս չէ ելած: Նախնիքներդ զայն Պօհեմիայէն բերած են իրենց հաւատքին համար հալածուած ատեններն: 1620էն սկսեալ բոլորին անունները անոր մէջ գրուած են: Ա՛հ, այս Աստուածաշունչը լաւ պահէ, ան սրտի խաղաղութիւն տուած է ծնողացդ, կրնայ նաեւ քեզի ալ տալ: Կ'աղաչեմ պահէ զայն, խօսք տուր ինծի...»: Պօղոս արտասանեց խոստում մը, զորս արցունքները խեղդեցին:

Այրին տկար հառաչ մը արձակեց. այս մայրական սիրտը բարախելէ դադրեցաւ, բայց իր դէմքին վրայ խաղաղութեան եւ ուրախութեան արտայայտութիւն մը մնացեր էր: Ո՛հ, եթէ Պօղոս այդ վայրկեանին կարենար աւելի բոլոր այն վիշտերը, որ իր թեթեամտութեամբ մօրը պատճառած էր, որքա՛ն երջանիկ պիտի ըլլար:

Ս'այրը թաղուած է: Քանի մը օր ետք Պօղոս կը ծախէ այրիին խրճիթը եւ կը հեռանայ երկրէն, իր հետ տանելով միայն որպէս իրեններէն յիշատակ, հին եւ մաշած Ս. Գիրքը, որ խոշոր կաշիէ կողքերով եւ մետաղէ փակաւնքներով պաշտպանուած էր: Առաջին էջերուն վրայ մեծ գիրերով գրուած են Պօղոսի քարեպաշտ նախնիքներուն անունները: Անոնք իրենց ծննդեան երկիրը թողած էին՝ Աստուածաշունչը՝ Աստուծոյ թանկագին խօսքը կարենալ պահելու համար:

Պօղոս յօժարակամ մէկդի պիտի թողուր այս խոշոր Սուրբ Գիրքը, եթէ մահամբժժ մօրը «խօսք տուր ինծի» բառերը ականջին հնչած չըլլային: Օր մը ճամբորդելէ ետք Պանդոկ մը մտաւ գիշերը անցնելու համար: Ճամբու ընթացքին Ս. Գիրքը շատ ծանր երեւցած էր իրեն: Ընթերելէն ետք անկէ հատուած մը կարգալ ուղեւորով պարկէն զուրս քաշեց այդ մեծ հատորը եւ բացաւ զայն: Բայց աւա՛ղ, քանի մը ուրիշ ճամբորդ երիտասարդներ իրեն նայեցան եւ սկսան ծաղրել զինքը:

«Այսօր ալ տակաւին Սուրբ Գիրք կարդացո՞ղ կայ. երբ ուրիշ գրքեր չկային, ֆեսա չունէր, բայց հիմա»: Եւ անքան մը բաներ ըսին որ մեր խեղճ աղան մամթահար գոցեց Ս. Գիրքը ու եթէ մօրը «ինծի խօսք տուր»-ը եղած չըլլար, այլեւ պիտի թողուր զայն: Այսու հանդերձ դիմադրեց, բայց անկէ ետքը ա՛լ չբացաւ զայն:

Տարի մը վերջ չ... քաղաքին հիւանդանոցը երկու փրատորներ կը բերուէին. անոնցմէ մէկը դանակի հարուած մը ստացած էր, արուարձանի մթին սրճարաններէն մէկուն մէջ գէշ ընկեր-

ներու հետ եղած կռիւէ մը ետք. միւսը լաստակէ մը վար ինկած էր: Անոնք քով քովի կը մընային օրօրուելով երկար ատեն կեանքի եւ մահուան միջեւ: Աղէկի դառնալուն պէս, հիւանդապահին պատմել տուին թէ, ի՞նչպէս եղաւ որ այդ մահճակալներուն մէջ էին: Առաջինը իր պարկը ուղեց, հարցնելով թէ ո՞ւր դրած էին: Հիւանդապահը պատասխանեց թէ մահճակալին քովն է: Անմիջապէս ձեռքը մէջը խոթելով աւելն կողմ պրպտեց, քանի մը ցնցոտիներէ եւ խոշոր գրքէ մը զատ ուրիշ բան չգտաւ: Զինք վիրաւորող գէշ ընկերները անտարակոյս գողցած ըլլալու էին իր ճակտին քրտինքով շահած պզտիկ դումարը: Գողցուած ըլլալուն չկրցաւ հաւատալ: Պարկը իրեն քաշեց, մէջէն հանեց ցնցոտիները, յետոյ Ս. Գիրքը եւ տեսաւ որ պարկը բոլորովին դատարկ էր: Ուրեմն հիւանդանոցէն ելլելուն ատանց դրամի պիտի ըլլար, ինչպէ՞ս գործիք պիտի գնէր, ինչպէ՞ս իր հացը պիտի վաստկէր: Այս խորհուրդներով տարուած, Ս. Գիրքը տեսնելով բարկ, լթեամբ գոչեց, «Ինչո՞ւ տակաւին ասիկա ինծի թողուցած են. աղէկ բան մը ըրած պիտի ըլլային եթէ այս գիրքը տանէին, որը չեմ գիտեր ի՞նչ պիտի ընեմ»: Եւ հայհոյելով զայն մէկդի նետեց:

— Ի՞նչ է այդ, հարցուց ընկերը:

— Ոչինչ, հին Ս. Գիրք մը:

— Զայն ինծի տուր ուրեմն:

— Շատ լաւ, առ, տակէ կ'ազատուիմ:

Յետոյ երեսը քարձերուն մէջ ծածկեց, որպէս թէ կ'ուզէր մոռնալ զԱստուած եւ աշխարհ: Գալով իր մօրը, արդէն շատոնց զայն մոռցած էր:

Հիւանդապահը Ս. Գիրքը գետնէն վերցնելով միւս հիւանդին տուաւ: Անիկա Գիրքը բացաւ, կարդաց եւ ընդունեց Տէրոջը հրաւերը. որ յոգնած ու բեռնաւորուած հոգիներուն կ'ուղղէր: Շատ մը շաբաթներ անցան եւ մեր երկու երիտասարդները առողջացած ըլլալով մեկնեցան: Հիւանդանոցի արձանագրութեանց մէջ նոյն թուականին հետեւեալը կարելի էր կարդալ. Կարսոյ Պ... մեկնած բժշկուած, որպէս աւետարանիչ, Պօղոս Ն... մեկնած բժշկուած, որպէս ծովային զինուոր:

Քանի մը տարիներ անցան: Ընթերցող, ընկերացէք մեզի Կրէօնական: Քրիստոսի ծառաները մինչեւ հոս զացած են էսքիմացիներուն փրկութեան բարի լուրը աւետելու համար:

Օր մը փոթորիկ կը պայթի ծովուն վրայ՝ Նաւ մը վտանգի մէջ է: Ալիքները զայն վտանգաւոր նեղուցի մը մէջ սառեցուն միջեւ պիտի փշրեն, եթէ անոր օգնող չըլլալ եւ ուղիղ ճամ-

բան ցոյց չտրուի: Բարեբախտաբար ծովեզերքէն միսիոնարները նաւին անձկութիւնը կը տեսնէին: Անոնք քանի մը էսքիմացիներ կը հաւաքեն, անոնց հետ երթալ եւ նաւը ազատել փորձելու համար:

Աստուծոյ շնորհքով իրենց նստած երկայն ու նեղ նաւակները ալիքներէն չեն կլլուիր եւ կը յաջողին ինքզինքնին նշմարել տալ վառանգի մէջ եղող նաւավարներուն: Շատ ջանքերէ ետք կը յաջողին անոնց լուծամբայ մը ցուցնել: Նաւը անոնց քով կը հասնի եւ նաւաստիները ազատուած են: Բայց սաստիկ հովը կայմին բարձունքէն նաւուն տախտակամածին վրայ կը նետէ երիտասարդ նաւագ մը, որ հոն կեցած էր որպէս պահակ: Խեղճը արիւնջուայ, զգայազիրկ երկնցած է: Վերջերը մահացու են: Մեր էսքիմացիները զայն ցամաք կը փոխադրեն եւ կը պառկեցնեն միսիոնարներէն մէկին մահճակալին վրայ:

Անոնցմէ մէկը կը հսկէ սնարին քով եւ մահամերձին Աստուծոյ մասին կը խօսի. անօգուտ խօսքեր: Նոյնիսկ այս անաւոր վայրկեանին Տէրոջը շնորհքը կը մերժէ, ինք որ քիչ ետք կենդանի Աստուծոյ առջեւ պիտի երեւնայ: Աւետարանի պաշտօնեան չյուսահատիր, կ'առնէ մեծ Սուրբ Գիրք մը որ կաշիով պատած է, փականքները կը բանայ եւ քանի մը համար կարդալ կ'ուզէ...: Բայց ան նաւագը աչքերը կը սեւեռէ այդ զրքին վրայ, յետոյ ձգտուած միանները մէկէն բոլոր մարմնով կը շտկուի եւ սարսափեցնող ձայնով մը կ'աղաղակէ, «Մէկդի՛ ալ գիրքը... ան իմն էր, ես զայն նետեցի՛. այլիս չեմ ուզեր... Մա՛յր, մա՛յր, զիս կը կանչես, բայց չեմ կրնար քեզի գալ... շա՛տ ուշ է, կորսուած եմ»: յետոյ նորէն իյնալով բարձին վրայ կը մեռնի, այսպէս ներկայանալու Աստուծոյ առջեւ: Ո՛հ, ի՛նչ սարսափելի տեսարան:

Ընթերցող, որ տակաւին հաշտուած չես Աստուծոյ հետ Յիսուս Բրիտոսով, դուն որ չես կրնար երկինքը ողջունել որպէս քու ձօրդ բռնակարանը, վստահ եղիր թէ Աստուծոյ առջեւ ներկայանալու միայն երկու կերպ կայ, կամ զԱյն Հայրս կոչել, կամ ալ — անաւոր բան — գտնուել Դատաւորի մը առջեւ, որուն աչքերը չարութիւն տեսնելէն մաքուր են:

Արդ, Պօղոսին մերժած Ս. Գրքին մէջ գրուած է, «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Աստուծոյ հաւատայ, չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»:

Հաւատա թէ Աստուած է որ քեզ կը հրաւիրէ. եթէ Սատանան մեղմիւ քեզի կ'ըսէ թէ դուն շատ գէշ ես, Սուրբ Գիրքը կը հաստատէ թէ Յիսուս արդարները կանչելու չեկաւ, հապա մեղաւորները ապաշխարութեան:

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ էթիէն

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՄԱՐՏ 1.—

ՏԵՍԻԼԻՔ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Դաս Ղուկ. Թ. 27-44: Նաեւ Բ. Պետ. Ա. 16-21

Հմր. 28-56ի այլակերպութեան դէպքը հ. 27ի մարգարէութեան կատարումը ըլլալ կը թուի. «Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները... մահուան համը պիտի չառնեն մինչեւ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը»:

Այս դասին մէջ նկարագրուած երկու դէպքերը թէեւ իրարու խոտոր համեմատող դէպքեր են՝ բայց նաեւ զարմանալիօրէն իրար կ'ամբողջացնեն: Շատ հաւանաբար լերան ստորոտը ինը աշակերտներուն անհաւատութեան եւ անյաջողութեան դէպքին հետ միասին նոյն ժամուն տեղի կ'ունենար լերան գագաթը այլակերպութեան փառաւոր տեսարանը: Յետագային եկեղեցւոյ սիւներ ըլլալիք Պետրոսի ու Յովհաննէսի համար ի՛նչ հրաշալի դաս էր աղօթքի եւ գործի անբաժանելի կատարումին համար: Այս երեք աշակերտները պարտ էին իրենց աչքերը հին ուխտի հսկաներէն (Մովսէս, Եղիա, եւն) միայն Յիսուսի վրայ դարձնել: Պենտեկոստէով եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը պարտէր ըլլալ միայն ու միայն Յիսուսի փառաւորուելովը (Յովհ. ԺԶ. 14) եկեղեցիին հիմը, զլուխը, փառաց յոյսը, Տէրը, ամէն բանի մէջ ամէն բանը Յիսուս պիտի ըլլար: Պետրոս պարտ էր սորվիլ եւ ամենալ տեսնելով թէ այն Յիսուսը որ ինք յանդիմանելու համար ձակեցաւ՝ փառաց Տէրն էր, (Մատթ. ԺԶ. 22, ԺԷ. 2 եւ Բ. Պետ. Ա. 16-18):

Լերան ստորոտը ինը աշակերտները կը ներկայացնեն պատկերը այն տեսակ հաւատացեալներու եւ եկեղեցիներու, որոնց ձախողութիւնը

տեղի կուտայ՝ (1) վիճաբանութեանց (Մատթ. թ. 13):

(2) Յիսուսը ճշմարտապէս փնտոտողներ Յիսուսի վրայ ալ կ'սկսին կասկածոտ եւ ցած աչքով նայիլ (Մարկ. թ. 21), Յիսուս այդպիսի աշակերտներուն կ'ըսէ, «ով անհաւատ եւ խոտորեալ ազգ»:

Միւթարիչ պարագայ մըն է ինը աշակերտներուն հարցումը Յիսուսի, «Մենք ինչո՞ւ չկըրցանք հանել զանիկա» եւ Յիսուսի պատասխանը անոնց «միայն աղօթքով ու ծոմապահութեամբ» (Մարկ. թ. 28): Ժամանակ է որ մեր օրերու եկեղեցիներ խոնարհ աղօթքներով Տէրոջմէ հայցեն, «մենք ինչո՞ւ չկըցանք հանել զանիկա» եւ Տէրոջը պատասխանը ստանալով գործադրեն «աղօթք եւ ծոմապահութիւն» քանզի մեր օրերու մեղաւորաց տեսակն ալ ուրիշ բանով մը կարելի չէ փրկել:

ՄԱՐՏ 8.—

ՅԻՍՈՒՍ ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ ԴԱՍ ԴՈՒԿ. Ժ. 25-37

Կարդալ Մատթ. Ե. 38-48

Օրինականը թէեւ ուղիղ հարցումով մը ուղիղ Անձին եկաւ, բայց սխալ շարժառիթ ունէր, «զԱնիկա փորձելով»: «Ի՞նչ ընեմ» ը սխալ է թէեւ, բայց ուրիշ առիթներու ուրիշներ ուղիղ շարժառիթով հարցուցած էին եւ ընդունած էին ոչ միայն պատասխան մը, հապա այն՝ ինչ որ իրենց հարցումով կը փնտոտէին, այսինքն «յաւիտենական կեանքը» (Տէս Գործք Առաք. Բ. 37, եւ ԺԶ. 30):

Յիսուս օրինականին օրէնքով կը պատասխանէ թէեւ, բայց նաեւ բոլոր անոր (Առակ. ԻԶ. 5) նենգ մտքին ըսելով ոչ միայն «Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է», հապա նաեւ (դուն Օրէնքը) «ինչպէ՞ս կը կարդաս» (բաղդ. Դուկ. Դ. 10, 11):

Հմր. 30 «Բարդ մը երուսաղէմէ ելիքով կ'իջնէր»: Երուսաղէմ խաղաղութեան քաղաքն էր եւ Երեքով անէծքի ու կործանման: Աղամէ ըսկսեալ բնական մարդուն ընթացքը այս եղած է, իջնել, իջնել մինչեւ դժոխք: Դովոտ Սողոմ իջաւ, Յովնան Յովպէ իջաւ, Սամփոն թամնութա իջաւ Նոյեմի Մովաբի երկիրը իջաւ, Դեմաս Գեսաղոնիկէ իջաւ:

«Իւ աւազակներու ձեռք ինկաւ»: Դէպի վար գացող ճամբան վտանգաւոր, անապահով եւ անպաշտպան ճամբայ մըն է. մինչդեռ Երուսաղէմ լեռներով, բարձր պարիսպներով ու աշտարակներով շրջապատուած եւ պաշտպանուած է (Սաղ.

ՃԻԵ. 2 եւ ԽԸ. 12-14): Շատեր այս մարդուն նման Աստուծոյ տունը, աղօթող հաւատացեալներու ընկերութիւնը Աստուածաբախ ծնողք մը ձը գեցին եւ իջան անիծեալ աշխարհի մէջ ու հոն «Գող»ին ձեռքը ինկան (Յովհ. Ժ. 10), եւ նա կուղտակեց զանոնք իրենց հաւատքէն, ուրախութենէն, վստահութենէն, յոյսէն, մաքրութենէն, արդարութեան զգեստներէն, եւ վիրաւորելով կիսամեռ թողուց զանոնք:

Հմր. 34, 32, «Անդիլի կողմէն անցաւ... անդիլի կողմէն անցաւ»: Կրնանք խորհիլ թէ քահանան ու Ղեւտացին ասոր նման խորհրդածութիւններ ըրին, «Խեղճ մարդ, պէտք չէր որ Երուսաղէմէն բաժնուէր ու այս վտանգին ենթարկուէր», եւ կամ «յաւնցանք իրն է, թող զգուշութիւն ընէր, իմ ձեռքէն ի՞նչ կուգայ, ես միշտ եմ, վիրաւոր մը ինչպէ՞ս տանիմ. այս գողերը պէտք է պատժուին» եւն. եւն: Բայց խեղճ մարդը մեռնելու վտանգին մէջ էր:

Հմր. 33, «Բայց Սամարացի մը»: Բաղդ Եփես. Բ. 4, «Բայց Աստուած»: Այն ինչ քահանան ու Ղեւտացին մերժեցին ընել (Եղեկ. ԼԴ. 4) Յիսուս րբա: Բաղդ. նաեւ Կ. 36 եւ Փիլ. Ա. 6, Եփես. Ա. 15, 14: Ճշմարիտ ընկերակցութիւնը միայն Յիսուսէ կրնանք սորվիլ, «Ինծի սորվեցէք» Մատթ. ԺԱ. 29, «Յիսուսի նայինք» Եբր. ԺԲ. 2:

ՄԱՐՏ 15.—

ՅԻՍՈՒՍ ԱՇՍԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԱՂԹԵԼ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ

Դուկ. ԺԱ. 1-13

Կարդալ Մատթ. Զ. 6-13

Չորս շատ կարեւոր կէտեր սորվելու ենք այս օրուան դասէն:

1. Յիսուսի աղօթքի կեանքը սերտիլ եւ լնկել աղօթել սորվիլ, նաեւ խնդրել Իրմէ ըսելով, «Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր»: Մանաւանդ Դուկա Աւետարանիչ յաճախ կը յիշէ եւ կը շեշտէ Յիսուսի աղօթքի կեանքը: Տէս Դուկ. Դ. 21, Զ. 12, 13, թ. 28, ԻԲ. 32, ԻԴ. 34:

2. Հմր. 2-4, Տէրունական աղօթքը սերտիլ անկէ աղօթել սորվելու համար: «Հայր մեր» ը բացատրող շատ հոգեւոր գրութիւններ կան, անոնցմէ մէկը հոս մէջ բերենք.—

«Հայր մեր» — զաւակն է որ իր Հօրը կը դիմէ:

«Քու անունդ սուրբ» — երկրպագողն է որ իր Աստուծոյն կը դիմէ:

«Քու թագաւորութիւնդ» — հպատակն է որ իր թագաւորին կը դիմէ:

«Քու կամքդ» — ծառան է որ իր Տիրոջ կը դիմէ:

«Ամէն օրուան հացը» — մուրացկանն է որ իր բարերարին կը դիմէ:

«Ներէ մեր մեղքերը» — մեղաւորն է որ իր Փրկչին կը դիմէ:

«Մեզ փորձութեան մի տանիք» — տկարն է որ իր Պաշտպանին կը դիմէ. ճամբորդն է որ իր Առաջնորդին կը դիմէ:

«Չարէն մեզ ազատէ» — գերին է որ իր Ազատարարին կը դիմէ:

Հմր. 5-10, Աղօթելու մէջ յարատեւել: Այս բանն է որ յաճախ կը պակսի հաւատացեալներուն մօտ, որոշ նիւթի մը վրայով յարատեւ, մինչեւ ստա-
նալին աղօթել: Շատերուն քով աղօթելու փա-
փաքը կամ եռանդը կուգայ միայն երբ նորնիւ-
թեք գրուին մեր առջեւ: Եթէ ցանկ մը շինենք
այն նիւթերուն եւ այն անձանց անուններուն ո-
րոնց համար մենք որոշեցինք աղօթել անցեալ
5 կամ 10 տարիներու ընթացքին, մենք պիտի
ամչնանք տեսնելով թէ ինչպէս թիթեռնիկներու
նման մէկ ծաղիկէն միւսը թռչած ենք, փոխա-
նակ մեղաւորներու նման մէկ ծաղիկին մէջի հելթը
ծծելու, ուրիշի մը չանցած:

4. Հմր. 11-13, երկնաւոր Հօրը վրայ վստայու-
թիւն ունենալ: «Որչափ աւելի...» բառերը ան-
հուն եւ անսահման իմաստ ունին հոս: Մեր Հայ-
րը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տա, որով-
հետեւ. —

ա) Մեր Հայրն է,

բ) Մենք Անոր զաւակները կարօտ ենք,

գ) Մեր Հայրը կը սիրէ մեզ,

դ) Մենք իրմէ կը խնդրենք զԱյն: «Պիտի տա՞յ
անոնց որ իրմէ կը խնդրեն»:

ՄԱՐՏ 22. —

ՅԻՍՈՒՍ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ
Դաս Դուկ. ԺԲ. 22-34

Կարգաւ Սաղ. ԻԳ.

«Եւ ըսաւ իր աշակերտներուն»: Կերակուրի և
հագուստի համար հոգ չընելու խրատը անապաշ-
խար անձերու տալ՝ պարապ ժամանակ վատնել
է: Անոնք որ դեռ իրենց հոգւոյն փրկութեան,
մեղքերուն թողութեան հոգը Տէրոջը չեն վրա-
տահած, ինչպէ՞ս կրնան կերակուրի եւ հագուստի
համար Տէրոջը վստահիլ: Այսպիսիներու մօտ
ընդհակառակը ծաղրանքի տեղի կուտայ, քանզի
կ'ըսեն, «Եթէ դուն տունը նստիս ու աղօթքը
ընես, Աստուած հացը երկինքէն առջեւ պիտի

չթափէ»: Անոնք թէեւ երբեմն լեզուով կ'ըսեն
թէ Աստուծոյ պէտք է վստահիլ, բայց գործնա-
կանին մէջ ալ աւելի իրենց բազկաց ուժին կը
վստահին քան թէ Տէրոջ:

Բայց եւ այնպէս աշակերտներուն մէջ ալ եր-
կու դասու մարդիկ կան: Հաւատացեալ աշա-
կերտներ եւ թերահաւատ կամ անհաւատ աշա-
կերտներ: Առաքեալը Եփես. Ա. 19ի մէջ գործա-
ծած «հաւատացեալներու» բառով զայս ըսել կ'ու-
զէ: Աշակերտի կեանքը տեւական հաւատքի, հա-
ւատացող հաւատացեալի կեանքն է: Յիսուս յա-
ճախ ստիպուած էր իր աշակերտներէն մէկը կամ
միւսը, կամ հաւաքաբար յանդիմանել, զանոնք
«թերահաւատներ» կոչելով: Մեր օրերու եկեղե-
ցին ամենէն աւելի պէտք ունի նիւթական երեւ-
ցած բաներու մասին եւս հաւատք ունենալ՝ այն
Փրկչին վրայ, որուն վստահած է աներեւոյթ եւ
հոգեւոր բաներու համար: Ներկայ եկեղեցիին
համար աւելի դիւրին դարձած է (Ղուկ. Ե. 23,
24) «քու մեղքերդ քեզի ներուած են ըսելը» քան
թէ «եւ իր ու քալէ» ըսելը: Բայց հոս ճիշդ տեղն
է ըսել նաեւ Յիսուսի միւս խօսքը, «Որպէսզի
գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի
երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ
անդամաւորին) եւ իր, մահիճդ առ ու տունդ գը-
նա»: Այսինքն մեր մեղքերու թողութեան հա-
մար ունենալ կարծած հաւատքին ճշմարիտ ըլլալը
պիտի փաստուէ՞ր՝ եթէ նաեւ մեր հաւատքով մեր
եւ ուրիշներու հիւանդութիւններն ալ բժշկուէին
հրաշքով: Արդ, հաւատքի այսպիսի փաստ մը
պարտին տալ հաւատացեալները ամենօրեայ
հացի եւ հագուստի համար հոգ չընելով՝ հապա
Տէրոջը վստահելով:

ՄԱՐՏ 29. —

ՅԻՍՈՒՍ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՅԱՏՐԷ

Դաս Դուկ. ԺԳ. 18-30

Կարգաւ Եսայ. ԿԲ. 1-7

Այս երկու առակներն ալ կը թուին ցուցնել
մարգարէական լեզուով այն աշխարհականացու-
մը որուն պիտի ենթարկուէր Քրիստոսի եկեղե-
ցին: Մանանելիս հատը կը ցուցնէ եկեղեցւոյն
իբր պզտիկ հօտ սկզբնաւորութիւնը: Նոյնիսկ
Պենտեկոստէն հասնելով 120ը կրնային մէկ սեն-
եակի մէջ սեղմել: Այս պզտիկ սկզբնաւորու-
թիւնը պիտի մեծնար եւ ծառ մը ըլլար,
բնական է եւ Աստուծոյ թագաւորութեան յատ-
կութիւններէն մին: Սակայն քանիք խնդիրը
տարբեր տեսակէտով մը: Ծառը Ս. Գրոց մէջ

աշխարհային իշխանութեան օրինակ է (Դատ. է. 10-12) Եղեկ. ԺԷ. 22-24, ԼՍ. 3-9): Ասիկա տեղի ունեցաւ Յ. Տ. 313ին երբ Կոստանդին Հոովմէական կայսրը քրիստոնէութիւնը պետականացուց եւ ինքզինքը եկեղեցւոյ ղուլն հռչակեց: Պետական եկեղեցին կորանցուց իր պանդուխտի և ճամբորդի կնիքը ու դարձաւ աշխարհի տեղացին եւ մտաւ քաղաքականութեան մէջ: «Երկիրքի թռչունները անոր ճիւղերուն վրայ բնակեցան»: Ս. Գրքին մէջ երկիրքի թռչունները օրինակ են Սատանայի եւ անոր հպատակներուն (Մարկ. Դ. 4, 5, Եփես. Բ. 2, 3): Բայց քրիստոնէութեան այս անբնականօրէն ծաւալումը չնշանակիր թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ եւ հոգեւոր եկեղեցին ծաւալած ըլլայ:

Հմր. 20, 21 խմբի առակը նոյն ճշմարտութիւնը կը ցուցնէ տարբեր տեսակէտէ. մինչ մանանխի առակը պատմական եկեղեցիին արտաքին քաղաքական դրութեամբ ապականացման օրինակն է, խմբի առակն ալ անոր ներքին ապականութիւնն է: Խմբը Ս. Գրքին մէջ ուրիշ 89 անգամներ յիշուած է եւ ամէն տեղ մեղքի օրինակն է. ուստի հակասութիւն մը պիտի ըլլար եթէ միայն հոս 90րդ անգամին տարբեր մեկնութիւն մը ունենար: (Տես Ծննդ. ԺԲ. 14 28, Ղեւտ. Բ. 11, Մատթ. ԺԳ. 12, Ղուկ. ԺԲ. 4, Մրկ. Ը. 15, Ա. Կոր. Ե. 6-8, Գաղ. Ե. 9): Առակին մէջի կրնը կրնայ ներկայացնել ինչպէս Ս. Գրքին մէջ ուրիշ տեղեր եւ՝ բարոյական եւ հոգեկան մըթնոյորաւ ապականող մէկը: (Տես Զաք. Ե. 7, 8, Յայտ. Բ. 20* ԺԷ. 4-6): Կինը անուանական եկեղեցին կարելի է կոչել, որ մեղքի խմբը մացուց Քրիստոսի աստուածութեան վարդապետութեան մէջ (երեք զրիւ ալիւրը Երրորդութեան վարդապետութեան մասնանշումն է): Ս'եր օրերու այդ ապականութեան խմբը արդիականութեան խըմբն է որ այս կամ այն կերպով կ'ուզէ արատաւորել Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը: Եւ ի՞նչ արագութեամբ խմբեցաւ անուանական քրիստոնեայ եկեղեցւոյ զանդուածը այս կործանարար վարդապետութեանց խմբով:

«Տէր, քիչու՞մք եւ անոնք որ պիտի փրկուին»: մարդ կը մղուի հարցնել Տէրոջը արցունքոտ աչքերով այսպիսի ցաւալի հաւաստումներէն յետոյ: Եւ Տէրը կը պատասխանէ, «Ձանք ըրէ՛ք որ նեղ դռնէն մտնէք, քանզի շատերը... պիտի չկրնան», հակառակ որ անոնք հիմա Անոր առջեւ «կ'ուտեն ու կը խմեն» (հաղորդութեան արտաքին ձեւական մասնակցութիւն): Հետեւողութեամբ

Վ. Ս.

ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆ

ձԱՆ ՌԻԷՍԼԻ

1748 Օգոստ. 26. «Ժամը 1ին Պօլթոն գացի: Հսկայ բազմութիւն մը հաւաքուած էր, բայց անոնցմէ շատեր ծայր աստիճան վայրենի էին: Անմիջապէս որ քարոզել սկսայ, անոնք ալ սկսան երկու կողմերէն զիրար ասդին անդին հրել՝ ջանալով զիս սանդուխտներէն վար ձգել, որուն վրայ կեցած էի. մէկ երկու անգամներ ալ յաջողեցան ձգել, բայց ես կրկին վեր բարձրացայ եւ քարոզըս շարունակեցի: Յետոյ անոնք սկսան քարեր նետել. միեւնոյն ատեն անոնցմէ ոմանք ետեւ գտնուած խաչին վրայ իւրան եւ կ'ուզէին զիս ետեւէն հրելով վար գլորել: Հոս Աստուած սկըսաւ ամենէն փոքր մանրամասնութեանց մէջ զիս պաշտպանել: Անոնցմէ մին ճիշդ ահանջիւս քով կը սլօտար, երբ քար մը զարնուեցաւ իր երեսին եւ հանդարտեցուց զինք: Երկրորդ մը բազմութիւնը ճեղքելով կատաղաբար վրաս կը վազէր, երբ քար մը զարկաւ ճակատին, արիւնը ժայթքեց եւ զինք իր եղած տեղը կ'եցուց: Երրորդը ինձ հասած էր եւ ձեռքը վրաս վերցուցած, երբ քար մը անոր ճիշդ մատերուն զարկաւ եւ հանդարտեցուց զայն: Այսպէսով ես կրցայ իմ քարոզս շարունակել եւ վերջացնել:


1743ի Հոկտեմբերին Ուէսլի լսեց թէ Ուէսլըսպըրիի մէջ իր եղբայրները սաստիկ հաւածանքի ենթարկուած էին՝ որոշեց հոն երթալ եւ զանոնք քաջալերել: Հոն հասնելուն երեկոյեան իսկ՝ խուժանը իր բնակած տունը շրջապատեց: Դուրսէն կը պօռային, «պատուելին դուրս հանեցէ՛ք» պատուելին կ'ուզէին: Ուէսլի խնդրեց որ խուժանին առաջնորդները ներս մտցնեն. ու թէեւ յաջողեցաւ զանոնք հանդարտեցնել, բայց անոնք իրենց կարգին չկրցան խուժանը հանդարտեցնել որ երթալով կը մեծնար: Հաշտարար դատարանի պաշտօնեան (Juge de Paix) Ուէսլին ձերբակալելու հրամանագիր մը հանած էր: Խուժանը այս հրամանին վրայ կատաղած կ'ուզէր փողոցին մէջ բզբտել Ուէսլին: «Դանկը պայթեցուցէ՛ք, մէկ հարուածով սպաննեցէ՛ք» կը պօռային ամէն կողմէ: Հարիւրաւոր ձեռքեր զինք հոս հոն կը քաշքուտէին: Շատեր հաճութեամբ կը զգային իր հազուատները բզբտելով, ոմանք իր երեսին բռնունցքի հարուածներ կ'ընեցնէին. արիւնը բեր-

նէն կը վազէր, Իսկ Ուէսլի անդադար քաղցրութեամբ կը խօսէր աջ ու ձախ ուղոնց որ կրնար իր ձայնը լսել տալ: Ճամբան նա ջանաց ճողոպրիլ եւ բաց դռնէ մը ներս մտնել, բայց իր ետեւէն վազելով զինք բռնեցին եւ մագերէն քաշքոտելով նորէն խուժանին մէջ բերին: Ի վերջոյ խուժանին առաջնորդը իր այս վատութեան համար խղճահարուելով յանկարծ բոլորովին տարբեր դիրք մը բռնեց: «Պարոն» գոչեց նա, «Հիմա ես քեզ պիտի պաշտպանեմ իմ կեանքիս գնովը եւ ոչ ոք քու մէկ մագիդ պիտի չպղչի»: Այս յայտարարութիւնը լաւ օրինակ մը եղաւ: Ամբողջին գիտովութիւնը կամաց կամաց հանդարտեցաւ: Այսպէսով նա դիշերուան խաւարէն ալ օգտուելով յաջողեցաւ անոնց ձեռքէն ճողոպրիլ: Իր եղբայրը որ քիչ յետոյ իրեն յանդիպեցաւ, կ'ըսէ, «Իր բղիկ բղիկ եղած հագուստներով՝ անիկա իմ վրաս Քրիստոսի քաջ զինուորի մը ապաւորութիւնը ըրաւ»: Ճան Ուէսլի ինքը կը հաւատայ թէ Աստուած այդ օրը զինքը քայլ առ քայլ, վայրկեան առ վայրկեան, երկարատեւ հրաշքով մը պաշտպանեց: Բայց ամենէն մեծ հրաշքները ասոնք էին որ այսպիսի տեսարաններէ յետոյ՝ նոյնիսկ այդ քաղաքներուն մէջ ուր հալածանքը տեղի ունեցած կ'ըլլար, երբեմն հալածանքէն միայն քանի մը օրեր յետոյ՝ հրաշալի արթնութիւններ կը պատահէին, ապաշխարութիւնները սկսելով ամբողջի առաջնորդ խնայեաններէն:

Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ



Աշխարհիկ կեանքը, ծանր բեռան տակ ճնշուող, կորստաբեր մարդու մը կը նմանի, որ իր չարչարանքներուն մէջ գերմարդկային ազատութեան մը կը կարօտի: Այս մեղսալից վիճակով, նա օրըստօրէ կ'իջնէ զէպի անդունդը, ուր կը տիրեն խաւար եւ տառապանք: Այսպիսին կեանքով կորսուած ամբաստան մ'է, եւ կը մերժէ իր Փրկչին հրաւերը, «Եկէք Ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ» Մատթ. ԺԱ. 28:

Հայ Աւետարանական Եկեղեցին մի քանի տարիներ առաջ, Բարիզի մէջ, կիրականօրեայ դպրոց մը հաստատած էր, որու անձամբ ես ալ կը յաճախէի: Ունէինք վարժուհիներ, որոնք մեզի Սուրբ Դրքի պատմութիւնները կ'ուսուցանէին:

Փառք Աստուծոյ որ այդ միջոցին Տէրը ինձ ալ յայտնուեցաւ: Հոն ճանչցայ Յիսուսը եւ հասկըցայ թէ Ան կը սիրէ կորսուած մանուկները: Զղացի սրտիս չարութիւնը եւ փափաքեցայ ինքզինքս Անոր յանձնել: Այս մարմաւոր հետզհետէ կը զօրանար իմ մէջս, քանի կը սորվէի Աստուծոյ խօսքը:

Կիրակի օր մը, դասի միջոցին վարժուհին մասնաւորաբար շեշտեց Յովհ. Գ. 16 համարը, եւ բացատրեց թէ ինչպէս Յիսուս խաչուեցաւ մեր մեղքերուն համար: Այս բանը ինծի մի քիչ տարօրինակ կը թուէր, սակայն սկսայ խորհիլ լուրթեամբ: Ինչ համար ամենագիտարին խնդիրն էր միասին վայելել թէ հոգեւոր եւ թէ աշխարհիկ կեանքը: Հետեւաբար Սատանան չորս կողմս պատկով կարողացաւ մարել պլպլացող լուստ: Բոլորովին յուսահատ՝ կարծես թէ հօգիս բոցերու մէջ կը տանջուէր: Հաւատացեալները դրախտի մէջ՝ Աստուծոյ շուրջ, եւ ինքզինքս ալ դժոխքի մէջ երեւակայելով կը սարսափէի, այլևս կը խորհէի թէ ազօթքը ինչ համար անօգուտ էր եւ Տէրը չպատասխաներ ինձ նմաններուն: Այս վիճակիս մէջ ամօթահար՝ ոչ մէկուն կ'արտայայտուէի, եւ յաճախ կարտասուէի, «սակայն ի գո'ւր: Փառք Տէրոջը որ այս վիճակս շատ չտեւեց: Օր մը մի քանի վկայութիւններու միջոցին շատ ազդուեցայ եւ ինքզինքս բոլորովին Յիսուսի յանձնեցի: Իր խօսքը սրտիս մէջ «փուշերէ եւ տառասակներէ գերծ բարեբեր հողի մէջ սերմանուած էր որ հետզհետէ կ'ոճէր ու պտղաբեր կը դառնար» (Մատթ. ԺԳ. 7. 8): Այս կերպով գտայ սրտի լման խաղաղութիւն եւ անպատմելի ուրախութիւն, հասկցայ թէ Աստուած չուզեր որ ոեւէ մէկը կորսուի, հապա ինքզինքը կը յայտնէ զանազան կերպերով: Իրապէս ապաշխարութիւնը որքան անհրաժեշտ է մեզքի թողութեան եւ յաւիտենական կեանքի համար:

Կ'ազօթեմ Աստուծոյ որ բոլոր անապաշխար ընկերներս արթնցնէ այս ձրի փրկութեան համար: Ամէն:

ՍՈՒՐԲԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Բարիզ

Կիր. Դպրոց

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ՀԵՏԵԻՆ ԻՆԾԻ

Թարգ. Անգլ. Յ. Ն. Ղ.

Լուրջ և հանդարտ

Քեզ պիտ ը հետ մարդոց որ սորդ մարդոց որ սորդ մարդոց որ սորդ

Քեզ պիտ ը հետ մարդոց որ սորդ, հե տե - լի ին - ծի.

հե տե - լի ին - ծի, հե տե - լի ին - ծի.

քեզ պիտ ընեմ մարդոց որսորդ,
 Թարգոց որսորդ, մարդոց որսորդ.
 քեզ պիտ ընեմ մարդոց որսորդ,
 Հետեւէ ինծի, յետեւէ ինծի, յետեւէ ինծի:
 քեզ պիտ ընեմ մարդոց որսորդ,
 Հետեւէ ինծի:

Այս երգը լուրջ երգ մըն է, ուստի
 լրջութեամբ եւ հանդարտութեամբ եր-
 գենք, բայց ոչ դանդաղ: Ասիկա կոչ մըն
 է Յիսուսի կողմէ լուր որ պատահինքուն
 եւ մանուկներուն համար, որպէսզի իրեն
 հետեւին. եւ ով որ Յիսուսի հետեւի, Յի-
 սուս պիտի ընէ որ անոնք մարդոց որ-
 սորդ ըլլան: Օրհնեալ ըլլայ Տէր Յիսուս
 ասոր համար: Ասիկա մեր կողմէն եղած

խրաքանչիւր պատիկ քայ-
 ւը քաջալերել գիտէ եւ
 կրնայ ալ: Օհ, երգենք եւ
 մեր սրտերը պատրաստենք
 Յիսուսի ընտրած քաջ որ-
 սորդներն ըլլալու:

Այս երգը մարտէյլի մէջ
 մեծեր ու պատիկներ սիրով
 կ'երգեն: Անոր ծախքը վը-
 ճարուած է քաղաքիս Կիր-
 դպրոցի աշակերտաց կող-
 մէն, քանզի այս ալ իրենց
 շատ սիրած երգերէն մին է:

Երգին պատմութիւնը
 հետեւեալն է. — Ղուկ. Ե.
 գլխուն մէջ կը կարդանք,

Յիսուս Գենեսարէթի ծո-
 վուն եզերքը կայսեր էր:
 Տեսաւ որ հոն ձկնորսներ
 կային, որոնք գիշերուան
 ի զուր աշխատութենէն
 յետոյ իրենց ուղկանները
 կը լուային: Անոնք Պետրոս
 եւ իր եղբայրը Անդրէաս է-
 ին: Յիսուս խնդրեց Սիմո-
 նէն որ նաւուն մէջ իրեն
 տեղ տայ եւ քիչ մը ջուրին
 մէջ քշէ նաւը: Պետրոս կա-
 տարեց ալ ինչորանքը: Յի-
 սուս հոն գտնուող ժողովուր-
 դին քարոզելէ յետոյ հրա-
 ման ըրաւ որ նաւը ծովուն
 խորունկը տանին եւ իրենց
 ուղկանները ձգեն ձուկ որ-
 տալու: Այս հնազանդութե-
 նէն յետոյ հիացումով տե-
 սաւ Պետրոս որ ուղկանե-
 րը պատռելու չափ ձուկ
 կային անոնց մէջ: Պետրոս
 իր միւս երկու ընկերները
 Յակոբոսն ու Յովհաննէսը
 օգնութեան կանչեց եւ ա-
 մէնը միասին աշխատելով
 ձուկերով լի ուղկանը նաւը
 քաշեցին: Այդ օրը անսո-
 վոր որս մը ըրած էին:

Պետրոս այդ հրաշ-
 քը տեսնելուն պէս ա-
 զաղակեց, «Տէր, իմ քովէս
 մէկդի գնա, քանզի ես մե-
 ղաւոր մարդ մըն եմ»: Յի-
 սուս ըսաւ Սիմոնին, «Մի
 վախնար, ասկէ ետեւ մար-
 քոց որսորդ պիտի ըլլաս»: Կարդա նաեւ Մատթ Դ. 19,
 Մարկ. Բ. 17:

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷԼ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան

7 Rue Papère.

8 30 կիր. դաս մեծերու 2 r. Philippe de Giraid

15 30ին աղօթածողով, » »

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիւ, Սէն ժէրոմ, Ս. Միքր, Ալբ, Պալ-

վար Սոս մասնաւոր բնակարաններու մէջ:

Շաբաթամիչի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէն Սէն Լուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիւ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վախան Սահակեան

Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loun

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնս

16 ին քարոզածողով:

ՍԷՆՏ ՄԱՐԿՐԻՒՄ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԱՍ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան

24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Վեր. Ա. Փափաղեան

Poitel'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՅՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ. Բրոն. Գ. Գ. Խայկեան

55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Վեր. Ե. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebatal

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatal.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔԷԼԻՄԱՐ—Քարոզիչ Պատ. Ի. Արքամեան

60 Rue Richelandière

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով

5/ Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՈՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Moule Aut. K

Ամառն Գ. կիրակին ժամը 16. 30ին ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻ.—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէքլեան

22ter Rue de Vitry-Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին սրաշառմունք

երկու կիր. անգամ մը 7.30ին երկու խառն ժողով

Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Խմբագրական գիտողութիւններ.— Մեզի քանի մը նամակներ հասան վերջին օրերը, որոնք մեզի կը ծանուցանեն թէ շատ կը փափաքին «Բանբեր»ը կարդալ, քանզի հոգեւորապէս կ'օգտուին անկէ, բայց զրամ չունին վճարելու գործի չգոյութեան բերմամբ, սակայն չեն ալ ուզեր անկէ զրկուիլ: Մէկը հետեւեալը կը գրէ Սուրբոյ գիւղերէն, ...Դիւղիս միջավայրը լաւ չէ, եւ սրճարան չեմ երթար, չունիմ ոեւէ հաճոյքի ժամանց ի բաց առեալ «Բանբեր»ի և կարգ մը թերթիկներու ընթերցումը: Հօրս, մօրս եւ իմ զուարճութիւնս այս է: Շնորհակալ եմ որ մինչեւ հիմա շատ մասերով օգտուեցանք «Բանբեր»էն ինչպէս նաեւ ուրիշները, որովհետեւ կարգալէն յետոյ ուրիշներուն ալ կուտանք: Այլ դուք գիտէ՞ք Ձեր ընկիւնը: Ուրիշ մը կը գրէ, «Թէ ձերացած եմ եւ թէ գործ չունիմ, բայց կը սիրեմ «Բանբեր»ը, չեմ ուզեր անկէ զատուիլ, բայց չեմ ալ կրնար անվճար կարգալ: Ուրիշ մը այրի, քանի մը գաւազնեւոր մայր, կրկին կը գրէ մեզի խնդրելով որ իր միակ միւլթարութեան աղբիւրը չկտրենք իրմէ, եւ կարելին ընենք իրեն «Բանբեր» մը զրկելու:

Որո՞նք պիտի փափաքէին այսպիսիներու թերթ նուիրել, թող հաճին գրել մեզի եւ անոնց բաժնեկիսն ալ միասին զրկել: ԽՄԲ.

ջայնիկ մօտէնու հեռուէն.—

Պ... 4 Դեկ. 1935, «Տարիներէ ի վեր «Բանբեր» թերթիդ բաժանորդ ենք եւ միշտ ուրախութեամբ կարդացած ենք. կը վկայենք թէ անիկա իր դիրքին եւ գործին մէջ հարազատ կը գործէ: Ներկայ օրերուն, մանաւանդ հայերուս մէջ շատ հազուադիւս են թերթեր, բեմեր, որոնց նպատակը եղած է Տէրը հաճեցնել... Անհաւատութիւնը եւ անօրէնութիւնը օրէ օր կը շատնայ, ասոնք տեսնելով ցաւ կ'զգանք, միւս կողմէ ալ փառք կուտանք Տէրոջը որ ունի եւ հաստատած է հաւատքով ու նուիրումով գործող եղբայրներ, որոնք ամէն զոհողութեամբ Տէրոջը խօսքին ճշմարիտ լոյսը ամէն կողմ զրկելու կը ջանան: Տեղին է ըսել թէ «Բանբեր» ինծի եւ մեր քոյրերու խումբին ամեն ատեն տուած է հոգեւոր սնունդ, գորացուցած, քաջալերած եւ միւլթարած է զանազան փորձութեանց ժամանակ: Մեր կողմէն կը մաղթենք եւ կ'աղօթենք որ պահէք ու շարունակէք Ձեր այս օղակար գործը եւ ամէն ատեն Ձեր նշանակէտը ըլլայ Տէրը հաճեցնել...: Վեր. Ս. Զ. Եղոյեան այս օրերս Թրէզնո հասաւ, կը լսեմ որ ան ալ նոյն գնահատանքով կը խօսի թերթիդ խմբագրութեան եւ տեղիդ հոգեւոր գործի մասին...:

Պ... 24 Դեկ. 1935 «Ներփակ կը զրկեմ 10 տողար որուն Ցը իմ կողմէ» իբր նուէր հաճեցէք «Բանբեր» զրկել հետեւեալ հասցէներուն: Պէտք է ըսեմ թէ ինձ ծանօթ կին մը իր ձեռքը անցած հոգեւոր թերթերը պահած էր ու ինծի տուաւ կարդալու, որով շատ երախտաւորութեամբ մնացի: Ուրախ եղայ նաեւ որ Տէրը մեր ազգին մէջէն ալ այսպէս Բրիտանոյի ճշմարիտ հետեւորդներ ունի ինչպէս որոշապէս կը հասկցուի իրենց գրութիւններէն: Տէրը օրհնէ չէ այս բոլոր աշխատութիւնները իր փառքին համար: